

ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՏՉԸ-ՀՄԱ-ԱՇՁԲ-2025/3

ք. Երևան

«08» 04 2025թ.

Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամը, ի դեմս գործադիր տնօրենի Սարգիս Բաղինյանի, ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Շին բարեկարգում» ՍՊԸ-ն ի դեմս տնօրեն Սոնա Պետրոսյանի, ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված «ՀՀ Շիրակի մարզի Ազադան բնակավայրի միջնակարգ դպրոցի վերանորոգում» (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 155 օր:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով:

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին չվարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառուն իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառուն պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխության և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված առնվազն 365 օրացուցային օր: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.10 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 30 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները

նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է 165,382,860 (մեկ հարյուր վաթսուներեք միլիոն երեք հարյուր ութսուներկու հազար ութ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ՝ ներառյալ ԱԱՀ-ն, որից 27,563,810 (քսանյոթ միլիոն հինգ հարյուր վաթսուներեք հազար ութ հարյուր տաս) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (գրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1

կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:¹ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 Սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

N	Խախտումը	Պատասխանատվությունը
1	Շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը չկատարելը	Նախահաշվային գնի 0,05 % չափով
2	Տեխնիկական անվտանգության նորմերի չպահպանելը	Նախահաշվային գնի 0,1 % չափով
3	Սանիտարահիգիենիկ և բնապահպանական նորմերի չպահպանելը	Նախահաշվային գնի 0,1 % չափով

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և

¹ Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է ստանձնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հանգամանքը:

Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:

6

արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով,

որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Սույն պայմանագիրը կազմված է _____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4, N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:
<https://drive.google.com/drive/folders/1TUjJewUTSE8M1ySYDwmGOt0Q-Q04yK6R?usp=sharing>

«Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում» լիցենզիա, ըստ հետևյալ ոլորտի

Չափաբաժինների համարները	Պահանջվող լիցենզիայի(ների) տեսակը(ները).
1	2
1	<p>Շինարարության իրականացում, 3-րդ և բարձր դասի լիցենզիա, ներդիրով</p> <ul style="list-style-type: none"> ✓ բնակելի, հասարակական և արտադրական կառույցներ 3-րդ և բարձր կարգի հավաստագիր ✓ ջրամատակարարում և ջրահեռացում (ջրամատակարարման և ջրահեռացման ներքին և արտաքին ցանցեր, հիդրոմեդրացիա) 3-րդ և բարձր կարգի հավաստագիր ✓ էլեկտրամատակարարում (էլեկտրամատակարարման, էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր, էլեկտրամատակարարման համակարգեր, ֆոտովոլտային և հողմատեներգետիկ կայաններ) 3-րդ և բարձր կարգի հավաստագիր ✓ ջերմագազա-մատակարարում և օդափոխություն (օդափոխության, ջեռուցման և օդի լավորակման համակարգեր, ջերմամատակարարման և գազամատակարարման համակարգեր) 3-րդ և բարձր կարգի հավաստագիր

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Հայաստանի տարածքային զարգացման
 հիմնադրամ
 Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան, 0037,
 Կ.Ուլնեցու 31
 ՀՎՀՀ՝ 00846441
 Հ/Հ՝ 9000110565 ԴՅ
 Կենտրոնական գանձապետարան
 Գործադիր տնօրեն
 Սարգիս Բաղինյան



/ստորագրություն/
 Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Շին Բարեկարգում» ՍՊԸ

Երևան, Շահումյան 16-րդ փողոց 180/1

ՀՎՀՀ 01315884
 Բանկ՝ Ամերիաբանկ ՓԲԸ
 Հ/Հ 1570030299134800
 Տնօրեն
 Ս. Պետրոսյան



/ստորագրություն/
 Կ.Տ

Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել հրենադրությանը չհակասող դրույթներ:

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*
« ՀՀ Շիրակի մարզի Ազատան բնակավայրի միջնակարգ դպրոցի վերանորոգում »
ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

N	Նկարագրություն	Զ/Մ	Միավորի գին (դրամ)				Ամբողջի գին
			քանակ	նյութեր	կատարում	ընդամենը	
			a	b	c	b+c	a*(b+c)
1	ՀԱՄԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ						88,786,367
1	1. Քանդման աշխատանքներ Տանիքի ծածկույթի քանդում ալիքավոր թիթեղից (վերադարձ)	Մ2	644.0	148		148	95,145
2	Ջրհորդանի քանդում թիթեղից (վերադարձ)	զմ	128.0	387		387	49,503
3	Տանիքի մանր ծածկույթների քանդում թիթեղից (վերադարձ)	Մ2	20.0	148		148	2,955
4	Ջրհոս խողովակների քանդում թիթեղից (վերադարձ)	զմ	42.0	158		158	6,620
5	Տանիքի փայտե կոնստրուկցիաների քանդում (վերադարձ)	Մ3	9.30	37,364		37,364	347,485
6	Հատակներից կերամիկական սալիկների քանդում	Մ2	95.7	654		654	62,562
7	Մանրահատակե հատակների քանդում (վերադարձ)	Մ2	690.9	829		829	572,487
8	Խճանկարային հատակների և բետոնե շերտի քանդում 60 մմ հաստ.	Մ3	15.40	23,388		23,388	360,170
9	Նստվածք տված հատվածներում խճանկարային հատակների և բետոնե շերտի քանդում 100 մմ հաստ.	Մ3	15.00	23,388		23,388	350,815
10	Փայտյա դռան բլոկների քանդում (վերադարձ)	Մ2	118.6	1,781		1,781	211,185
11	Փայտյա պատուհանների բլոկների քանդում (վերադարձ)	Մ2	77.50	3,060		3,060	237,121
12	Մետաղապլաստ պատուհանների բլոկների քանդում (վերադարձ)	Մ2	81.72	3,060		3,060	250,032
13	10 և 20 սմ հաստ. թեթևբետոնե բլոկներից միջնորմերի քանդում	Մ2	148.0	1,246		1,246	184,409
14	Պատերից և շեպերից հին ներկի մաքրում	Մ2	2084.0	241		241	501,348
15	Պատերից և շեպերից սվաղի քանդում	Մ2	412.4	1,188		1,188	489,774
16	Ամուսնոցների հարթակներից և աստիճաններից բազալտե սալերի քանդում	Մ2	15.9	4,282		4,282	68,079
17	Շին աղբի մաքրում, շենքից դուրս բերում	տ	5.0	2,467		2,467	12,333
18	Շին.աղբի բարձունը ա/մեքեն.	տ	85.0	457		457	38,826
19	Շին.աղբի տեղափոխում մինչև 7կմ	տ	85.0	2,382		2,382	202,444
20	2. Տանիք Տանիքի փայտե կոն-ների սարքվածք (տախտակ և կավարամած)	Մ3	10.31	220,455		220,455	2,272,895
21	0,5մմ հաստ. ներկված ցինկապատ թիթեղից կախովի ջրհորդանի հրականացում	զմ	128.0	2,908		2,908	372,172
22	Ջրահեռացման կիսախողովակի երկար կեռ	հատ	256	1,437		1,437	367,918
23	Ջրհորդանի փական	հատ	2	504		504	1,008
24	Անկյուն ներսի	հատ	4	2,773		2,773	11,092

25	Անկյուն արտաքին	հաստ	8	2,773		2,773	22,184
26	0,5մմ հաստ.КП-25 տիպի ներկված ցինկապատ պրոֆիլավոր թիթեղից տանիքի ծածկի կառուցում (գույնը RAL 8017 անփայլ)	ս2	734.0	8,089		8,089	5,937,275
27	Ներկված ցինկ.թիթեղից պիպ 150x150 մմ	զմ	120.0	3,026		3,026	363,078
28	Մանր ծածկույթների սարքվածք (հոսնոցներ, քիվեր, ձնարգելներ, օդափոխության հորաններ, ձեղնալուսամուտ) 0,5մմ հաստ. ներկված ցինկապատ թիթեղից	ս2	107.0	7,922		7,922	847,628
29	0,5մմ հաստ. ներկված ցինկապատ թիթեղից 100մմ տրամագծով ջրիս խողովակների կախում	կ-տ	10	9,869		9,869	98,694
30	Ջրահեռացման խողով.100մմ	զմ	80.0	2,962		2,962	236,969
31	Ջրահեռացման խողով. ամրացում պատին	հաստ	80	1,135		1,135	90,770
32	Արմուկ	հաստ	20	1,827		1,827	36,550
33	Ձեղնահարկի լուսամուտների փեխկերի փոխարինում	ս2	3.90	32,179		32,179	125,499
34	Տանիքի փայտե կոնստրուկցիաների հրապաշտպանում	ս3	13.50	2,121		2,121	28,631
35	Տանիքի փայտե կավարամածի հրապաշտպանում	ս2	734.0	720		720	528,781
36	Տանիքի մետաղական ցանկապատի մոնտաժում H=700 մմ	զմ	124.0	204		204	25,281
37	Ամրան կլոր Ф20 մմ	տ	0.357	605,130		605,130	216,031
38	Ամրան կլոր Ф25 մմ	տ	0.185	605,130		605,130	111,949
39	Պողպ.թերթ 100x30x2մմ	ս2	0.620	9,156		9,156	5,676
40	Տանիքի ցանկապատի մետաղական կոնստրուկցիաների ներկում 2 անգամ	ս2	43.4	1,914		1,914	83,076
41	3. Միջնորմներ 20սմ հաստությամբ միջնորմների շարվածք պեմզաբլոկներից 90,0*0,2=18,0 մ3	ս3	18.00	30,465		30,465	548,378
42	Միջնորմների պատրաստում պեմզաբլոկից 10սմ հաստությամբ	ս2	64.00	4,703		4,703	300,962
43	Միջնորմների ամրանավորում	տ	0.162	90,134		90,134	14,602
44	Ամրալար Ф6A-I	տ	0.058	390,813		390,813	22,667
45	Ամրան Ф8 A500C	տ	0.104	422,331		422,331	43,922
46	Միջնորմների ամրանավորման հատվածների բետոնացում РУ200	ս3	3.79	48,465		48,465	183,681
47	Պեմզաբլոկից շարվածքի և ե/բ կոնստրուկցիաների միջև հորիզոնական կարանների լցում փրփրապլաստով 3 սմ հաստ.	զմ	55.0	79		79	4,323
48	3 սմ հաստ. փրփրապլաստ	ս2	8.7	661		661	5,752
49	Պեմզաբլոկից շարվածքի և ե/բ կոնստրուկցիաների միջև միջև ուղղահայաց կարանների լցում փրփրապլաստով 2 սմ հաստ.	զմ	36.0	156		156	5,601
50	2 սմ հաստ. փրփրապլաստ	ս2	6.0	517		517	3,104
51	Անցքերի գայլիկում ե/բ կոնստրուկցիաներում Ф 12մմ L=15սմ խողովակամբ	հաստ	150	1,060		1,060	158,933
52	Միանույլ ե/բետոնե բարավորների կառուցում U-200 բետոնով	ս3	0.200	95,415		95,415	19,083
53	Ամրալար Ф6 A1	տ	0.0045	390,813		390,813	1,759
54	Ամրան Ф12 A500C	տ	0.0248	384,510		384,510	9,536
55	4. Օդափոխության հորաններ d=110x2,8մմ ՊՎԷ կոյուղու խողովակների անցկացում	զմ	74.0	2,657		2,657	196,584

56	Օդափոխության հորաններ երեսապատում 12,5մմ հաստ. ջրակայուն գիպսոստվարաթղթից, մետաղական կմախքի վրա	մ2	28.0	7,705		7,705	215,738
57	Օդափոխության ճաղավանդակների տեղադրում 150x150մմ	հատ	18	4,042		4,042	72,762
58	5. Հատակներ Մ-200 բետոնից 40 մմ հաստ. հարթեցնող շերտի կառուցում	մ2	242.8	2,256		2,256	547,725
59	Հատակների հիդրոմեկուսացում հանքածյուղով 2 շերտ (ընդ. 3մմ)	մ2	46.3	2,311		2,311	107,017
60	20 մմ հաստ. ցեմենտյա հարթեցնող շերտի կառուցում	մ2	342.8	1,126		1,126	385,835
61	30 մմ հաստ. ցեմենտյա հարթեցնող շերտի կառուցում	մ2	733.6	1,547		1,547	1,134,901
62	Հատակների կառուցում կերամիկական սալիկներով	մ2	46.3	7,800		7,800	361,159
63	Հատակների կառուցում պրեսգրանիտ սալիկներով	մ2	296.5	10,712		10,712	3,176,164
64	Շրիշակների կառուցում պրեսգրանիտ սալիկներով, h=10 սմ	զմ	215.0	1,433		1,433	308,110
65	Հատակների իրականացում հետերոգեն վինիլային, հաստությունը 2մմ, նեռարյալ ինքնահարթեցնող շերտը	մ2	733.6	15,313		15,313	11,233,749
66	h=80 մմ ՄԴՖ-ից լամինացված շրիշակի տեղադրում	զմ	459.0	1,839		1,839	844,179
67	Հատակներում շեմերի տեղադրում	զմ	16.2	808		808	13,093
68	Նստվածք տված հատվածներում 200մմ հաստ. խճային նախապատրաստական շերտի իրականացում	մ3	30.00	16,573		16,573	497,181
69	Մ-200 բետոնից 120մմ հաստ. նախապատրաստական շերտի իրականացում	մ3	18.00	47,368		47,368	852,622
70	Ցանց պողպատե, ամրանային, եռակցված, BP d=4,0մմ, բջիջը 150x150մմ	մ2	150.0	782		782	117,320
71	6. Պատուհաններ և դռներ Ներքին ՄԴՖ-ից խուլ դռան բլոկների տեղադրում փայտե շրջանակներով, փեղկի հաստ. ոչ պակաս 40 մմ, ՄԴՖ-ի շերտի հաստ. ոչ պակաս 6 մմ, (նեռարյալ երեսակալ, սարքերը, դռան արգելափակիչը), հաճայնեցնել պատվիրատուի հետ	մ2	15.33	72,146		72,146	1,106,002
72	Ներքին ՄԴՖ-ից ապակեպատ դռան բլոկների տեղադրում փայտե շրջանակներով, փեղկի հաստ. ոչ պակաս 40 մմ, ՄԴՖ-ի շերտի հաստ. ոչ պակաս 6 մմ, ապակեպատումը 4+4մմ (նեռարյալ երեսակալ, սարքերը, դռան արգելափակիչը), հաճայնեցնել պատվիրատուի հետ	մ2	44.01	72,146		72,146	3,175,156
73	Դուռ մետաղապլաստե, բլոկով, սպիտակ, 60մմ հաստ., պրոֆիլ արտերկիր	մ2	7.56	82,501		82,501	623,707
74	Դուռ ալյումինե, բլոկով, սև, 46մմ հաստ., առանց ջերմակամուրջի, պրոֆիլ արտերկիր	մ2	23.34	99,319		99,319	2,318,102
75	Դուռ ալյումինե, վերնափեղք (չբացվող մաս), սև, 46մմ հաստ., առանց ջերմակամուրջի, պրոֆիլ արտերկիր	մ2	6.36	52,970		52,970	336,890
76	Դուռ ալյումինե, բլոկով, սև, 60մմ հաստ., ջերմակամուրջով, պրոֆիլ արտերկիր	մ2	18.19	143,019		143,019	2,601,519
77	Դուռ ալյումինե, վերնափեղք (չբացվող մաս), սև, 60մմ հաստ., ջերմակամուրջով,	մ2	4.28	68,861		68,861	294,725

	պրոֆիլ արտերկիր						
78	Դռան ավտ. փակող մեխանիզմ (շվեյցար)	հատ	4	10,594		10,594	42,376
